

ԱՄԻՆԻՔ


ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1899

891.99

789

359



891.99

7-89

u ~

ՊԵՐԱ ՊՈՑԵՆԱՆՑ

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

անդրանիկ ներք

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՑ

18 ՆՈՅՄ. 1918 Ք, ԹԻՖԼԻՍ.

1001  
3505

ԵՂԻԳԻ ՄՎՐՏՉԵՆՑ ՏՈՒՆԸ




Տպար. Վ. Մարտիրոսեանցի || Կնոքր. Կ. Մարտիրոսեանցի.

Орбеляновская ул., д. № 112.


1899.

Б. И. В. [faint text]

[faint text]



Дозволено цензурою. Тифлисъ, 5-го февраля 1899 г.



10 - 62

2004

## Ե Ջ Ի Գ Ի Մ Կ Բ Տ Չ Ե Ն Յ Տ Ո Ի Ն Ը

### Ա.

**Պ**եռ նոր էր կարմիր արևը Փամբակի հարթ ու խորթ սարերի ետևից իր ոսկեշողշող նիզակներով պատռտել երկնքի երեսի սև քօղը և համբուրում հսկայական Արագածի երկճղի սրածայր գագաթները, դեռ չէին վերջացրել պոչատ լորերն իրանց անուշ հատընդհատ ճրտճտոցները, դեռ կարմրատոտիկ, սևաչեայ, կարմրակտուց, խատուտալանջ կաքաւները քարափների սուր սուր ծայրերի վրայ կանգնտած՝ իրանց քաղցրահնչիւն կղկղոցով բարևում էին արևի ծագումը, որ Եղիզու լաւուկ Աւոօն իր գառները քշեց դէպի Արագածի խոտաւէտ թումբը:

Գիւղից երկու արտաչափ հազիւ էր հեռացել մանուկ գառնարածը: Նա թողել էր դժատուտիկ ուլերին ու փափկադմակ գառնուկներին վազէվազ անելու ծաղիկների ու սէզերի մէջ, իսկ ինքը մօտեցել էր քարափի տակից բղխող պարզ աղբրին և լուացում էր:

Յանկարծ աղբրակի ականակիտ լճակի պարզորակ հալելու մէջ նկատեց մի մանկական

ժպտուն դէմք և առանց գլուխը բարձրացնելու՝ ծիծաղկոտ երեսով ասաց.

— Աղջիկ, Սալբի, ընչի՞ եկար:

— Հացիդ մէջ ի՞նչ ունիս, Աւդօ, փոխադարձ հարց տուեց սիրունատեսիլ Սալբին:

— Աւգօն խոլոյն չըպատասխանեց, նա վերջին անգամ մի կուց ջրով չփչփացրեց երեսը, կանգնեց տեղից, հասակաւոր մարդից իրան ժառանգութիւն անցած արխալղահնի փէշի մնացորդով մի տեսակ սրբուեց ու դարձաւ դէպի խօսակիցը:

— Չե՞ս ասում, հացիդ մէջ ի՞նչ ունիս, կրկնեց իր հարցը մանուկ աղջիկը:

— Ի՞նչ պիտի ունենամ, քո մօր բնութիւնը չըզիտե՞ս, հինգ օրուան չորացած մի բոքոն-հաց տուեց ու ասաց. — Քեզ հերիք է, երբ որ ճաշուայ ոչխարակիթին գառները կըբերես մէր անելու, թան կըտամ՝ կըխմես:

— Քեզ համար սեր եմ բերել ու փափուկ հաց, ասաց աղջիկը, մայրիկս տուեց, որ ուտեմ, ես էլ...

— Գու էլ չըկերար ու բերիչ լինձ հա՞: Թայնու, թայնու, մեռնի՛ Աւգօյի գլուխը, երկար ծոր տուեց տղան: Չէ՛, չէ՛, աղջի՛, Սալբի, սերն ու կակուղ բոքոնն ինքդ տար կիր. ես իմ չոր հացը կըթրչեմ էս աղբրի կաթնահամ ջրի մէջ ու կուշտ կուտեմ:

— Աւելի լաւ չի լինիլ, որ երկուստ միասին մեր պաշարները մէջ գնենք, իբար հետ տանք, կռանանք, մոզի անենք<sup>\*)</sup>, ջուրը խմենք ու վեր կենանք, էս արվան ծաղիկների միջին աչխապուկ խաղանք, ես քեզ բռնեմ՝ դու ինձ:

— Մէրդ քեզ չի ձեծիլ:

— Մօրս ասել եմ, որ գնում եմ լուսադրբի մօտ Աւդօլի հետ խաղալու, նա էլ թողել է:

Փոքրիկ գառնարածը արձակեց միջքին կապած սպիտակ կտաւը, փռեց ջրի ափին. Սալբին էլ իր կռնառակի թաշկինակի մէջ ունեցածը հանեց, խառնեց ընկերի հացի հետ և ասաց.

— Անցեալ շարաթ աւրտէրենց տանն էի, հացն օրհնելու՝ նա ինձ ու իր աղջիկ Աննին կանդնացրեց, երեսներիս խաչ հանել տուեց ու հրահայեց, որ հաց ուտելու՝ երեսներիս խաչ քաշենք:

— Արի՛ մենք էլ էնպէս անենք, առաջարկեց աղջիկը:

— Ես խաչ հանիլ չըզուեմ, պատասխանեց Աւդօն:

— Ես կըստփորցնեմ քեզ:

\*) Ծանօթ. Մոզի անել նշանակում է հօրթերի նման խմել:

— Զէ՛, գլուխը բացասաբար շարժեց տղան, խալիլ ազէն ինձ ձեր տունը ղրկելուս՝ հօրիցդ թագուն՝ հրամայեց, որ երեսիս խաչ չըհանեմ, եթէ իմանայ, իր կեռակառուց ջուհարդար թըրովն իմ գլուխս կըկտրի, շներին կըտայ:

— Գու էլ ոչ կերթաս ձեր զիւղը — Միրաք, ոչ խալիլ աղի երեսը տեսնիս:

— Լաւ:

— Քաս կաց, ասաց աղջիկը և բռնեց Աւդօյի ձեռքն ու նրա երեսին խաչ հանեց:

Տղան անդիտակցաբար աչքը զարձրեց դէպի դիմացի սարերը, ուր գտնուում էր իրանց զիւղը. նա, կարծես, վախեցաւ, թէ կարող էր խալիլ աղան այնտեղից իմանալ և իրան պատժել:

— Նստենք, ասաց աղջիկը:

Աւդօն իր չոր բոքոն -- հացը թաթախեց ջրի մէջ, կտրեց և ուղում էր ուտել:

— Զէ՛, դու իմ հացը կեր, ես քոնը, էս էլ քեզ տափակ սեր, ասաց Սալբին և առանց Աւդօյի կամքը հարցնելու, իր ձեռքով կտրեց սերը, կոխեց գառնարածի բերանը և նրա բռնած չոր հացը խլեց, ինքը կծեց:

— Ես չոր հաց սիւում եմ, սովորել եմ, դու կեր փափուկ հացը, ասաց Աւդօն և իր կողմից սլակաս չըմնալով՝ մի կտոր փափուկ հաց ու սեր կտրեց, բռնեց աղջկա՛յ գլուխն և ուժով կոխեց բերանը:



— Իս մի կտորը քո խալթեր կուտեմ, ծամելով և կուլ տալով ասաց Սալբին, բայց մընացած կակուղը դու պիտի ուտես, չորը ես:

— Չէ, կակուղը դու՛ չորը ես:

— Չէ, կակուղը դու՛ չորը ես:

— Չէ, չէ, չէ և երեխաները միմեանց զլուխ բռնելով՝ աշխատում էին մէկը միւսին ուտացնել:

— Աղջի, Սալբի, ես սովոր եմ, առում եմ, ես իմ օրումս կակուղ հաց չեմ կերած:

Միրաքում՝ Խալիլ աղենց տանը՝ ցորենի հացի համն էլ չըզիտէի. օրական մի հատ դարու հաց, կամ կորեկի ճաթ կըտային ինձ ու կըքշէին դուրս. որբի օրն անլծած. հիմի ձեր ցորենի չոր հացն ինձ համար դառան քիւլբաստուց լաւ է:

— Քիւլբաստին ինչ կերակուր է, հարցրեց աղջիկը, ես չեմ կերած:

— Ես էլ չեմ կերած, բայց լսած եմ, քիւլբաստին, ասում են՝ հովուի կերակուր է, հովուները դաշտումը դառը քերթում են, իր մորթու մէջ փաթաթում են ու թաղում գետնի մէջ վառուած ու անցած տաք մոխրախառն կրակի մէջ, ասում են՝ անմահական կերակուր է. երբ մեծօնամ, հովիւ դառնամ՝ կըշինեմ, քեզ էլ բաժին կըբերեմ:

— Քիւլբաստին թող մնայ յետոյ, իսկ հիւ

մի դու էս սերն ու հացը կեր, կրկնեց իր պահանջն աղջիկը և աւելացրեց. մայրիկս էլ երբ որ ինձ սեր ու կարագ կրտայ, ես էլ քո բաժինը կըպահեմ:

— Կըպահես՝ ես էլ չեմ ուտիլ:

— Չես ուտիլ, ես էլ քո բերած «եօթն աղպօր կռան արիւն» ծաղիկը չեմ ուզիլ ու էլ ոչ մօտդ կըգամ, ոչ հետդ կըխօսամ: Սրանից յետոյ՝ դու իմ ընկերը չես, լացակրկնած՝ թշերն ուռցրեց Սալբին, ես էլ կերթամ տէրտէրեաց ՍՀօյի հետ կընկերանամ:

— Ինքան լինի՝ քո սրտիդ չըկաչի, ինչ որ ասես՝ կըլսեմ, առաց Աւդօն ու սկսեց ուտել սերն ու կակուղ հացը:

Երկու պարզ ու անմեղ խաղընկերները, համարեա, հասակակից էին, ութի և վեցի մէջ տատանում էին նրանց տարիքը, տղան մօտաւորապէս երկու տարով մեծ էր աղջկանից:

Աբարանցի մէլիք Մնօյի մինուճար աղջիկն էր սիրունիկ, կարմրաթուշիկ Սալբին. Աբարանայ հիւսիս-արեւելեան կողմի երեք չորս Եզիգու զիւղերից ամենայայտնի Միրաք զիւղացի մի հասարակ Եզիգի հովուի որդի էր խոշորադէմ, բաց զեղեցկատեսիլ Աւդօն:

Երկար չէր Աւդօյի պատմութիւնը: Միրաքաբնակ Եզիգիներն ցեղապիտ խալիլ աղալի

լաւ բարեկամ էր Աբարանցի մէլիք Մնօն:

Մի օր վերջինս գնաց Միրաք գիւղը՝ Խալիլ աղային հիւր. նրանց բա՛ում տեսաւ մի ճղճղատուած, գոյնը կորցրած, ախտոտ կտաւէ շապկահնի մէջ կուչ է եկած, բոկոտն և զլխաբաց Աւդոյին: Երեխայի ցեխի մէջ շաղախուած պատկերի ու լացն ճակատի վրայ մէլիք Մնօն նկատեց բնական խելք, ճարպիկութիւն և քաջասրտութեան նշաններ: Հարցրեց տեղեկացաւ, որ լամուկն անտէր ուրբ է, լսկ ռայեայի մէջ եղած բոլոր անտէրներն ու անապաւէնները ցեղապետ աղաների վզերին աւելորդ բեռներ են:

— Եթէ կոզեա՛ ոտով գլխով քեզ կըբաշխեմ, ասաց Խալիլ աղան մէլիքին, երբ վերջինս սկսեց գովել երեխայի մէջ նկատուած ունակութիւնները:

— Չնորհակալ կըլինիմ:

— Մեզ մօտ շնորհ բերելուդ համար՝ մի թամբած ձի պէտք է ընծայէի քեզ, ասաց Խալիլ աղան, բայց որովհետեւ ոչ ձի ունիմ, ոչ մտրուկ, փոխարէնն այս երկու ոտնանի մտրուկ—լամուկը քեզ ընծայ:

— Միրով ընդունում եմ թանգագին պարգևդ, Խալիլ աղայ, ասաց Մէլիքը. թող Սալբուս հետ խաղալով մեծանայ մեր տանը, երկու տարուց՝ սա մեզ համար լաւ գառնարած կըլինի:

Մէլիք Մնօն Եզիզու լամուկ Աւդոյին քաշեց իր գաւախն և բերեց իւր տունը:

## Բ.

Աստ չըքաշեց, լաւ գառնարածը դառաւ լաւ ոչխարարած, լաւ հովիւ: Ա՛յ տարով էր մեծանում, Աւդօն օրերով էր հասակ քշում:

Աւելորդ էր Սալբու իր բաժին կերակրներից զրկուելը, Աւդօն էնպէս լաւ, էնպէս հնազանդ, հաւատարիմ ու քաղցր տղայ դուրս եկաւ, որ Մեկիքի կիներ սովորական «եգիդու լամուկ» լսուքը մոռացաւ, «Աւդօ ջան» կոչեց:

Ի՛նչ ուտում էր, ի՛նչ լւմում էր, տանն եղած ժամանակ՝ Աւդօն սեղանակից կը, ոչխարը գնալուս հետը տանում էր, կամ բաժինը պահւում էր:

Մուշացուել էր, որ Աւդօն իրանց հովիւն է, Աւդօն տան տղայ էր, Աւդօն Սալբու եղբայրն էր: Սալբու հետ խաղալ, Սալբու հետ դաշտ գնալ, Սալբու հետ ոչխար կլթել, Սալբու հետ կլթած կալթը ոչխարի տկերի, կամ հողէ լայնաբերան կժերի մէջ լցնել, շալակները, կամ ուսերն առնել ու տուն բերել, սովորական էին դառել բոլոր գիւղականների աչքին: Ակնարկներ, բամբասանքներ՝ պառաւ կանանց կողմից պատանի զոյգի հասցէին՝ բնաւ չէր լի:

նում. Մէլիքենց Աւոն է, ինչ վնաս ունի, Աւոյն պէս տղայի վրայ չար մտքով չար աչք զցողի չար աչքը կրկուրանայ. Աւոն զիւղացիներից որին պէտք չի եկի: Աւոն, կըշտէր ամեն մի մարդ, էն տղամարդ Աւոն, զիւղի աչքն ու պարծանքոն Աւոն:

14 — 15 տարեկան պատանի Աւոյին ճանաչիլ չէր լինում, բեղ ու մօրուք խիտ բուսած, բարդի ծառի չափ բարձրացած, ոտք ու ձեռքըն երկաթի լնդի պէս պինդ, եղէղնի կոթով նիղակը խոտի ցօղունի պէս ճօճեցնող, Հովուական դաւադանով վահանախաղի մէջ բոլոր գաւառի քաջակորով երիտասարդներին չաղթող, թրի մէջ հարուածով ոչխարի գլուխը, իսկ մատի մի թօլ գարկով եօթը տարեկան թրամազիլ աքաղաղի պարանոցը թռցնող, կտրիճների մէջ ամենակտրիճ տղամարդն էր նա: Զատկին, բաշիկենդանին, հարսանիքների առաջին՝ ամենից ճարպիկ ձի խաղացնողը, մականախաղի մէջ հակառակորդին ձիաթաւալ գլորողը, քներակներից արիւնն աղբրի պէս շռչացնողն Աւոն էր:

Մենք չըսիալուենք. հայ երիտասարդներից ոչ մէկի քթից մի մատնոց արիւն հոսելու պատճառ չի եղած իւր կիանքումն Աւոն: Աւոյն ոխերիմ հակառակորդներն, ամառները Արագածի վրայ սար եկող Չօբանքեարայ թուրքերն ու մուսուլման քրդերն էին:

Երկու չիշնալ ցեղերից ոչ մէկը չի սիրում «սատանապաշտ» Եզիզիներին: Առաւելապէս՝ առում են Եզիզիներին մուսուլման Ռասիլի, ձխրգնէլի և այլ վայրագաբարոյ քուրդ ցեղերը:

— «Ընչի՞ պիտի Եզիզի:ն դէմքով, դժագրո՞ւ. — թիւնով, յաղթանդամութիւնով, լեզուով, հագուստի տարադո՞ւ և շատ նախնաւանդ սովորութիւններով քրդից չըրոշտի, իսկ հաւատով՝ մուրուած սատանապաշտ մնալ»:

Հարցրու Եզիզու, մանաւանդ նրանց զըլ-խաւոր շէյխին — հոյւսրականին և նա քեզ կասի, թէ քրդերն իրանք են մուրուել. եօթն աչքանի՝ արևը թողել են, Իսլամի հաւան են պաշտում: Մենք սատանային չենք պաշտում, հաւատացնում է շէյխը, բայց չենք էլ կամենում դժոխքի թագաւորի անունը չիշել. շատ կարելի է՝ Աստուած մի օր նրանց խղճում է ու նորից մալաֆների (հրեշտակների) կարգն է դառնում, ընչի՞ նրա սրտին դիպչենք:

— Եզիզի, Եզիզի, սատանապաշտ Եզիզի, ծագրում և արհամարհում են վերջիններին Իսլամ քրդերը:

— Ինչ որ էլ լինինք, ձեզ նման հօ արեն-խում զող աւագակներ չենք, պատասխանում են Եզիզիները Քրդերին:

Իրաւունք ունին, Եզիզիքը, թէպէտ, ոչ զիր ունին, ոչ կարգալ գիտեն, իրանց աղօթք-

ներն ու արարողութիւնները, թէև, միայն շէյ-  
խերի բերաններումն են աւանդաբար որդէց որ-  
դի մնացած, բայց նրանք շատ խաղաղասէր,  
հիւրասէր, աշխատասէր, երկրագործ ժողովուրդ  
են՝ միայն թէ նրանց հանգիստ թողնեն. թէ  
չէ՛ վայ նրանց վիրաւորողներին, արիւնն արիւ-  
նով մինչև ե թը պորտը կըլուանան:

Ասենք՝ սար եկող Չօբանքեարէքն ու Քըր-  
զերը չըզիտէին, թէ Աւգօն Եզիզի է, ամէնքը  
նրան հայ էին ընդունում և իբրև հայի՝ նրա  
զէմ մեծ ատելութիւն էին զգում:

Չօբանքեարէքն ու քրզերը՝ երկու ցեղն էլ  
Սրասիի աջ ու ձախ ափերում իրանց ձմերա-  
նոցներն ունին, իսկ ամառները՝ նրանք ամ-  
բողջ բնակութիւններով իրանց տաւաղ — ոչ-  
խարն առած՝ աւելացրու Չօբանքեարէքանց  
տասնաւոր ուղտերն էլ հետը՝ բարձրանում են  
Արագածի կանաչագեղ, դալարաւէտ և ջրաշատ  
լանջերը, խմում են մեր հայրենի սարի անու-  
շահամ և առողջարար կաթնաղբիւրների քըր-  
տընքի նման պարզ ջրերը, ծծում են նրա  
կենսապարար, աստուածային, նօսր օդը, բերում  
են իրանց նիհար, ոսկորները զուրս պրծած,  
կիտակենդան անասունները՝ գարնան սկզբին՝ և  
տանում են զիրացրած, հարթուած, տռզուած  
ու զեղեցկացրած՝ աշնան վերջին. հալուող ձիւ-  
նի հետ՝ զարունքը՝ քիչ քիչ բարձրանում են

սարն ի վեր, նոր եկած, առաջին ձիւնի հետ՝  
աշնանը՝ քիչ քիչ իջնում են սարն ի վեր:

Աներես, անխիղճ ու օրէնք չըճանաչող  
ցեղեր են երկուսն էլ: Յնաւ ուշ չըգարձնելով  
օրէնքով իրանց համար որոշած սահմանին,  
մէկ էլ տեսար՝ քշեցին իրանց անասունները  
օտարի սեպհականութեան մէջ. իսկ այդ օտարը  
նրանց համար՝ իրանց ատելի հայն է: Արօտա-  
տեղի է, կանաչ, հասկաւորուած արտ է, վա-  
րած, մշակած ցանքս է՝ ամենևին չեն հար-  
ցնում, ներս են խուժում և ոտնատակ են տա-  
լիս: Զուր՝ օրէնքի անունով սպառնում ես այն  
բարբարոսներին. օրինապահներն իրանք զգուել  
են նրանցից: Ճարահատեալ՝ զէնքի ուժով պի-  
տի իրաւունքդ ձեռք բերես:

Ահա, թէ ընչով էր շահել Աւղօն իրանց  
թշնամի սար եկած ցեղերի ատելութիւնը:

Եթէ չէին կարողանում մարսել այդ եր-  
կու հայտեաց ցեղերը՝ ձիարշաւների խաղերի  
ժամանակ՝ Աւղօյից ստացած հարուածները, պի-  
տի երևակայել, թէ ո՞ր աստիճան կատաղում  
էին նրանք, երբ Մէլիքի զիւղի արտերը, կամ  
խոտատեղիները տրորտակ տալու՝ յանկարծ երե-  
ւում էր Աւղօն մի քանի երիտասարդների հետ  
ձիանց ականջը մտած և ազատ ասպարէզ էր  
տալիս մէլիքի բաշխած իր կեռածայր սրին:  
Մինչև մի երկու քաջերի կիսամեռ չըվիրաւորէր,



զետին չըտապալէր, մինչև տուած վնասների տանապատիկ հատուցումը ոչխարներով, տաւարով, կամ նծայգ ձիերով չըտանար, չէր դադարիլ արիւնհեղութիւնից. զարկում էր, մահամերձ վիրաւորում էր, բայց չէր սպանում, որպէս զի զործը դատաստանի դրօնը չըճանրանայ: Գատաստանատները շեմքեր մաշկներին Աւոն տեսնել չէր կամենում: Ուղիղն առած՝ ոչ Չօբանքեարէքն և ոչ քրդերը նմանակս չէին սիրում և չեն սիրում դատարանները. սրանց պարզ հաշիւն այդպէս է պահանջում, դատապարտուողը միշտ իրանք պիտի լինին:

Մի անգամ միայն՝ երկու Չօբանքեարայի էն աշխարհքը ճանապարհ դրեց Աւոն:

Ահա, թէ ինչպէս եղաւ:

Աւոն Արաղածի լեռնաձորի եզրին նստած՝ դմալուել էր երկնակատար, միապաղաղ քարափի գլխից ցած գահավիժուող ջրվէժից բարձրացած փոշիների հիւլէներով: Ահագին այդ փտակը պատառելով հոկայական Արաղածի կուրծքը, սրընթաց սահում է դէպի ցած և խոր անդնդի ապառաժների վրայ՝ փշուր փշուր լինելով՝ փոշիանում է և ամպանման մշուշով սլատում ձորը:

Առաւօտ էր: Պայծառ արևի ճառագայթները ցօլացել էին հեղանիւթ մառախուղի շրդարշանման փռուածքի մէջ և հազարաւոր

Տիաճաններ յառաջ բերել, որոնց անթիւ ու անհամար գոյների անունները դժուար թէ աշխարհւումս բառերով ու արմատներով ամենահարուստ համարուած լեզուի մէջ անգամ գտնուին:

Հեզամուռնչ զեփիւռն իր թափանցիկ թեւերի վրայ էր առել Աւգոյի ջղոտ երեսը:

Աւգոյի ոչխարներն առաւօտեան անուշ հովին ախորժանօք արածում էին ծնկնահար բարձրացած, հազարերանգ ծաղիկների ու հիւթալից, մազատերև խոտերի մէջ:

Իւր սիրելի հօտի նախաճաշիկն աւելի քաղցրացնելու նպատակով՝ Աւգօն զրել էր բերանին իւր հովուական սրինգը և կլկացնելով՝ նուագում էր: Ոչ իւր նախնի քաջագուն Եղիղիների փառքի յաղթերգն էր նուագում պատանին և ոչ կորցրած հայրենիքի ողբերգը. նա կրակոտ ոիրավառ երիտասարդի սիրերգի դայլայլիկներն էր հնչեցնում:

Ո՞վ էր Աւգոյի սիրոյ սուարկան, ո՞ւմ անունն էր յեղյեղում նրա զիւրաթեք մատների շարժումներով՝ մեր գործը չէր: Նա իւր եարի անունը մինչև այսօր իւր ամենամտերիմ ընկերին էլ չէր արտասանած: Եւ ի՞նչպէս կրպատաէր Աւգօն այդ նուիրականութեան վարագոյրը՝ մինչգեռ ինքը սարսափում էր, սարսուռը նրա գլխի մազերը քստմնեցնում էր, ան-

ներկի յանցանք էր համարում իւր համար, եթէ մտքի մէջ, ժամանակ ժամանակ՝ որոճում էր մինչև ներկայ կէտս իւր համար բերանի սրբաթիւն եղած մի անուն — մի պաշտելի և խորհրդաւոր անուն:

Այդ ամենը շատ լաւ, բայց ամեն մի նրա սրնդի նուազը լսող փորձառու, սուր ականջ ունեցող մարդ կասէր, թէ Աւգոն սիրահարուած է և անյօյս սիրահարուած: Մինչև իսկ՝ մի հաստատ եղբակացութիւն կարելի էր անել նրա երգելուց. այն է՝ թէ վաղուց չէր՝ սէրը թափանցել էր նրա սրտի խորշերը. աւելի պարզ՝ առաջին սէրն էր նուազում Աւգոն:

Մեղք էր Աւգոյին անհանգիստ անել այս երջանիկ ժամին, բայց մի ձայն նրա բերանից չափշտակեց սրինդը և կոխեց հովուական կուլարի, կամ վերտրիււի կրճքի վրայ կարուած բնի մէջ:


— Աւգօ, Աւգօ, եաման, Աւգօ, իլականջ ու անսիրտ Աւգօ...

Ահա, թէ ինչ լսեց նա և ական թօթափել՝ կողքից կախած սուրը դուրս քաշեց պատենից, շարտեց կուլարն ու երից և սարն ի վայր ներքև վազեց:

Երևի, Աւգոն ճանաչեց ձայնը:

— Եկա՛յ, եկա՛յ, գալիս եմ, գալիս եմ, գալիս եմ:

Ոչ լեռնաթմբի զրոյթ, ոչ զեռնի զրոյթ, ոչ զեռնի զրոյթ, ոչ զեռնի զրոյթ:



1001  
5054

ու խուռոչները չէին արգելք լինում Աւղօյի թափին. առուների ու ձորակների վրայով նա թըռիչք էր անում, ժայռերի ծայրերից նա իրան շարտում էր, ամենևին չըմտածելով՝ թէ ոչ խաղն անտէր էր թողել և կարող էին մօտիկում գտնուած քրդական ալաչուիներից (վրան) դուրս թափուել գողութիւնն օրօրոցում սովորած քրդերի լամուկները և տանել իւր հօտից մի գառը, կամ մի ոչխար: Գուցէ Աւղօն վրստահ էր իւր զայլիեղդ, չորս արջաչափ զամփոսների ծուատիչ ժանիքների սրութեանը, բայց այս վայրկենին՝ նրա համար միևնոյն էր. թէկուզ ամբողջ հօտը քշէին, կլանէին, նա յետ չէր մնալու իւր ճանապարհից:

Դէպի արևելք, բաւականին հեռուն՝ Չօբանքեարէքանց վրաններն էին անկարգ և անհամաչափ ընկած:

Այդ վրանների կողմից էր զալիս ձայնը, դէպի այդ վրաններն էր շտապեցնում իւր քայլերն Աւղօն:

— Աւղօ, քարասիրտ Աւղօ...

— Չըվախենաս, սիրտդ պինդ պահիր, ճչաց Աւղօն և սրի մի հարուածով թագրեց ետևից երկու Չօբանքեարաներից մէկի զլուխը: Չարաբաստիկ արարածը, կարծես, զգալով, թէ վրտանգը ետևից է, անցել էր ընկերի ձիու քամակը և ձեռքի մորակով շտապեցնում էր կատաղի չորքոտանու քայլերը:

Քայց զուր էր անլեզու նժույզին մտրակա-  
հար անելը. ճանապարհը զառիվայր, զառիվեր  
էր, քարքարուտ էր, խորդ ու բորդ էր, ձին  
թեւաւոր պիտի լինէր, որ ոտքերը գետնիցը  
կտրած՝ օդասլաց թռչէր և փախցնէր իւր տի-  
րոջ գաւակին նստած, կռները փախցնողի միջ-  
քով պատ տուած ու ամուր կապկպած քրն-  
քոյշ էակին, 14—15 տարեկան սիրուն աղջը-  
կանը:

—Գլուխդ քիչ ձախ թեքիր, Սալբի, գո-  
չեց ետեւից Աւգօն՝ երկտասարդներից մէկի կեան-  
քի հաշիւը վերջացնելից յետոյ, թուրս զրա  
վզի աջ կողմիցն է զիպչելու:

—Քայց իմ կռներս կապուած են սրա զօ-  
տուց, հասկանալով Աւգօյի ծրագիրը, գոչեց  
Սալբին, ես կարող եմ սրա հետ ձիուց վէր ընկնել:

Թէ ինչպէս փախստականի ձիու սանձը  
բռնեց, կանգնացրեց, ինչպէս վայրկենական՝  
սրով կտրեց աղջկայ ձեռնակապը, ինչպէս սուրը  
խցիկեց առաջի կողմից աղջիկ փախցնող Չօբան-  
քեարի սիրտը և ինչպէս ձեռքը ձգեց, հաւի  
ձազի նման թռցրեց ձիու վրայից Աւգօն Սալ-  
բուն, անկարելի է պատմելը և անհաւատալի:  
Որովհետեւ մի ուրիշ գործողութիւն էլ կատար-  
ուեց այդ միջոցում: Աւգօն առաջ թրի կոթի  
մի ուժգին զարկով տուեց, կտորեց երկտասար-  
դի աջ ձեռքը, որ բարձրացրել էր ռեվօլվերը  
և դէմ տուել իր թշնամու կրծքին:

Ատրճանակն ընկաւ զետին՝ ուղիղ Աւգօյի սոքի տակ, զիպաւ քարին և բացուեց բոլոր փողովակներէից միասին: Ջարմանային այս է, որ գնչակներէից և ոչ մինը չառաւ Աւգօյի սոքին:

— Աւգօ ջան, լաց եղաւ և փաթաթուեց գալիագէմ աղջիկին իւր ազատարարի պարանոցոն և հայրսրս հայրուրի ետեւից անհամար շռայլում էր:

— Հէնց էգպէս էլ կանց, Սալբի ջան, քեզ՝ գրկած պիտի տանիմ, պէտք չեն մեզ չօբանքեարէքանց ձիանը, էսպիտի տեղը ստնաւորի է և ոչ ձիաւորի. տխմարների խելքն Աստուած առել է, քեզ գրկած տանելու տեղ՝ ձիով են ուզել փախցնել: Քայց առա, Սալբի ջան, անիրաւները քեզ սրտեղից վերցրին, հարց տուեց վերադարձին Աւգօն:

— Ես մեր օբայից (վրան) կարագ, սեր ու քամած մաճուն վեր կալայ, դու ինձ ասել էիր՝ թէ չըռչըռի (ջրվէժ) մօտ պիտի ոչխարներն արածայնես, գալիս էի, որ հետզ հաց ուտեմ ու չըռչըռին մտիկ տամ: Ի՞նչ չօբանքեարի տրդէքը, երևի իմ ետեւից են եկած եղել, ձորակը որ մտայ, քամակիցս հատան, կապեցին ու տաշան:

— Դու էլ ինձ ձայն տուիր:

— Ես էլ քեզ օգնութիւն կանչեցի:

— Զատ էլ լաւ արիր, բայց մի բան տես՞մ,  
միւս անգամ եթէ չըռչըռն ուզենաս տեսնել,  
ինձ առա՛ միտտին զանք. մէկ էլ՝ հերիք է  
էղքան ինձ սեչ՝ ու կարագ ուտացնես, երեխայ  
էի՛ անու՞մ էիր՝ խաթրդ չէի կոտրում, հիմի կա-  
տարեալ տղամարդ եմ՝ էն էլ՝ Յգիգի -- քուրդ.  
քրդինը սոխ ու սև հացն է, քեզ պէս նազիկ-  
մազիկ, թուխ աչքերով, թուխ ունքերով, լուս  
երեսով, ջահէլ տղէքանց սրտերն անսխակ խո-  
րովող սիրունների ուտելիքն է սեր ու կարագը և  
սչ թէ ինձ նման կոշտ ու կոպիտ, զէշ ու անտաշ  
քրդինը:

— Գու ոչ զէշ ես և ոչ քուրդ:

— Յգիպու լամուկ չեմ:

— Ո՛չ, եթէ մէկ էլ էգ խօսքը բերանիցդ  
հանելու միտք ունիս, ինձ էստեղ վեր գցիր,  
թող գայլերը զան ինձ ուտեն, թող չօբանքեա-  
րէքը զան, ինձ վախցնեն: Առա՛ հայ եմ ու  
քրիստոնեայ:

— Քո խաթեր՝ հայ եմ ու քրիստոնեայ:

— Ուրեմն դու էլ ինձ համբուրիր:

Աղօն բերանի մէջ առաւ իրան ուղղուած  
քնքոյշ շրթունքներն ու երկար ժամանակ  
ծծում էր:

— Մեր հողուն մեղք չարինք, Սալբի ջան,  
ջրվէժի մօտ իւր թեթև բեռը ցած դրեց ու  
ծնկան վրայ նստացրած՝ հարցրեց Աղօն:

— Ընչի՞, դուրբան քեզի:

— Ձեր տունն եկած օրից՝ ես քեզ շատ ու շատ եմ պաշել, բայց էս օրուանն ուրիշ պաշ էր:

— Մինչև էսօր՝ երկու անհասկացող երեկոյք քոյր ու եղբօր պէս մի հօր, մի մօր ձեռի մեծացել ենք, թող էսօրուանից՝ երկու հասած, կատարած տղայ ու աղջիկ երեխայու թիւնի սէրը մարդ ու կնոջ սէր դարձնեն ու մինչև՛ զերեկման ջանն ասեն, ջանն լսեն, սիրով՝ ընկերներ մեռնեն. սատանէն է, որ մենակ է՝ ընկեր չունի, լեզու եղաւ անհասկացող համարուած զեղջկուհին:

— Սատանի սնունն ընչի՞ տուիր, մեղք է:

— Չէ՞ դու ինձ ասացիր՝ հայ ես ու քրիստոնեայ, չէ՞ ես քեզ խաչակնքել եմ սովորցրել, չէ՞ ինձ հետ շատ անգամ ես աղօթք արել ու լոյս վառել մեր աւերակ ժամի սեղանի առաջին: Եթէ այն բարբ սրտիցդ էր և ոչ թէ երեսանց ու լեզուիդ տակից, թէ որ դու հայ-քրիստոնեայ ես՝ ասա՛ անիծուի՛ սատանէն:

— Ղորթ է, եզիդիները սատանին ու շունց չեն տալիս, բայց քո խաթեր՝ թող՝ էսօր էլ, էգուց էլ, մինչև յաւիտենական էլ անիծուի՛ սատանէն. ես էլ եզիդի չեմ, ես հայ եմ ու քրիստոնեայ, անունս է Մկօ:



— Ասա՛ Մկրտիչ, մեռօնիդ անու՛նը Մկօ  
 չի լինիլ, կրլինի Մկրտիչ:

— Մկրտիչ, Մկրտիչ, Մկրտիչ:

Գ.

**Մ**եց ամիս էր անցել վերոգրեալ դէպ-  
 քից յետոյ, սարևորներն իջել էին Արագածից  
 և ցրուել իրանց ձմերոցները, սևատաւարը վա-  
 դուց կապուած էին մսուրքների առաջ, իսկ ոչ-  
 խարը՝ դաշտեցոնցն արդէն դաշտումն էր, իսկ  
 սարեցի Աբարանցիներինն էլ քշել էին տաք  
 դաշտը: Ձմեռ ժամանակ՝ Արալատեան աշխար-  
 հում՝ երբեմն պատահում է, որ ձիւն քիչ է  
 նստում, խոտերի ու եաւեան կոչուած հիւթա-  
 լից, բայց դառն բոյսի գլուխները կիսից վեր  
 ձիւնից բարձր է մնում և ոչխարի համար  
 հնարաւոր է լինում ձիւներ տրորելով՝ արածել:

Մէլիք Մնօյի ոչխարն էլ դաշտային գիւ-  
 դերի արօտատեղիներն էին քշուած:

Ա:դօն կուլաբն (վերարկու) ուսին՝ օր ու  
 զիշեր թափառում էր Ա. գիւղի անջրղի, խո-  
 տաշատ անապատներում:

Ոչ մէլիք Մնօն և ոչ կինը տեղեկութիւն  
 չունէին իրանց ընտանեկան շրջանում կատար-  
 ուած փոփոխութեան մասին:

Աւգօն տանը չէր. լինէր էլ՝ Սալբու հետ  
 կապած սլաշմանի համաձայն՝ պարտաւոր էին

սրտերում վերջերս բորբոքուած սիրոյ կրակը մի ժամանակ մոխրի տակ անթեղած պահել:

Միա՛յ նորութիւնը, որ զարմացրեց մէլիք Մնօյին, իւր կնոջը, տէրտէրին և ողջ զիւղին, Աւօյի հաստատ որոշումն էր:

— Մէլիք աղա՛յ, ասաց մի օր Աւօն, երթանք տէրտէրի մօտ:

— Ընչո՞ւ, աղա՛յ:

— Թող մի գիր գրի, հրաման բերի, ինձ կնքի, հայ-քրիստոնեայ շինի:

— Սրտանց կասես, տղա՛յ:

— Քո տան կերած հացն իմ աչքերը բռնի, թէ խօսքուծս սուտ լինի:

— Հապա՛ խալիլ աղային ինչ պատասխան տանք:

— Աստճուց թաղուն չի՛ քեզնից ինչ սրահեմ, ես առանց քո հրամանի՛ չորս լաւ մաքի (էգ ոչխար) ու մի ղօջ անցեալ օրն առաջս արի, տարայ խալիլ աղային ընծայ և խնդրեցի, որ ինձ իրաւունք տայ հայանալու: Նա իմ ձեռով ղօջը գրկեց շէյխին ընծայ ու կանչեց իր մետ, միտքս յայտնեց:

Խօսեցին, միտք արին, կանչեցին զիւղի լաւ մարդկանցն էլ հարցրին ու ինձ իրաւունք տուին:

— Մէլիք Մնօն ափսոս մարդ է, ասաց խալիլ աղան, նա մեր Աւօյին որդու պէս սիրում է, մէլիքի սիրտը շահելու համար՝ պիտի

Թողանք Աւգոյին՝ երթայ Հայերի մէջ իր բազմ-  
 դր գտնի: Արի, տղայ, ձեռքներս պաշի, զնա  
 նոր հաւատիդ ծառայի, ասաց ինձ շէյխը:

— Զէյխն էլ, տղայ, հարցրեց զարմացած  
 մէլիքը:

— Զէյխն ասաց. ես ուրախ եմ, որ մեր  
 հաւատը թողնողը Հայ գառնայ ու սչ խալամ,  
 Հայերը մեզ սիրում են, մեր Եզիզիքը տարուայ  
 կէս մասը՝ Աբարանում՝ Հայերի տներում են զլուխ  
 պահում, մենք Հայի հացն ուտում ենք, նրանց  
 զինին խմում ենք, նրանց ժամերում լուս ենք  
 վառում, նրանց սրբերի գոանը մատաղ ենք  
 մորթում, մեր հաւատը Հայի հաւատի քոյրն է:

— Հմ, տղայ, իրան ես ասում:

— Հայու հաւատը վկայ:

Մէլիքն ուրախացաւ, տէրտէրը թուղթը  
 գրեց, գործակալին ուղարկեց, Աւգոն ոչխարն  
 առաւ, զնաց Ա. գաշտային զիւղի առաւար  
 արօտատեղերում ձմեռուայ կէտը պահելու:

## Գ.

Քեկտեմբերի վերջերքն են, յանկարծա-  
 կան թափուած, զազաչափ ձիւներ, նրա հետ  
 անբաժան սառնամանիքն ու բուքը սկսեցին  
 կոտորել անապատներում արածող հօտերը. ո՛վ  
 ինչ զիւղին մօտ էր՝ իւր հօտի կենդանի մնա-

ցածներին մի տեսակ մերձակայ գիւղը Հասցրեց  
և տեղաւորեց:

Նոյնն արեց և Աւղօն, հինգ օր մի ձորա-  
կում բքարդել ձիւնի տակ մնալուց յետոյ՝ 500  
գլուխ ոչխարից 50 գլուխ հազիւ մնացած՝ նա  
մի տեսակ ազատեց և մի երեկոյ մտաւ Ա. գիւ-  
ղը և ուղղակի քշեց Մէլիք Մնօյի ծանօթ  
Սամփսոն աղայինց գուռը:

Այգքան ոչխարին տեղ և խոտ Սամփսոն  
աղան չունէր: Նա հինգ հինգ ցրուեց հարեան-  
ների գոմերը և հնգից մինը սահողին խոտա-  
նալով՝ խնդրեց կերակրել քաղցած ու կիսակեն-  
դան անասուններին: Անարգար տնօրէնութիւն  
չէր Սամփսոն աղայի կողմից, խոտի մի խուրձը 50  
կոպէկ էր գնահատուում և չրկար, որ ծախէին:

Անապատաբնակ հովիւ, ամիսներով չօլե-  
րում մարդի երես չբտեսած՝ Աւղօն ինչ գիտէր,  
թէ իւր եկած օրն ինչ երեկոյ է հայերի համար:

Ոչխարը տեղաւորելուց յետոյ՝ Սամփսոն աղան  
ներս հրաւիրեց Աւղօյին իրանց մեծ հացատունը:

Աւղօն զարմացած մնաց, երբ ԲՈՒՐՍՈՒ վրայ  
փռուած դտաւ ընթրիքի սփռոցը և հազար ու  
մի տեսակ անուշ կերակրներ շարուած:

Երկու ձիթի ճրագ՝ հանդիպակաց սիւններին  
ամրացրած՝ տախտակէ ճրագթաթերի (ճրագա-  
կալ) վրայից լուսաւորում էին սեղանը:

Քուրսուց վեր՝ տան անկիւնում մի նոյն-

պիսի բարեւից ընթրիք էր պատրաստուած: Արագների աղօտ, կողմնակի արձակած լոյսի պատճառաւ՝ վերի սուփրան հաղիւ նշմարոււմ էր:

— Նստիր, Աւգօ, նստիր այդ տեղ, առաջարկեց հիւրասէր տան տէրն իւր հիւրին քուրսու ներքի կողմը, որտեղից ուղղակի նկատոււմ էր անկիւնոււմ փռուած սեղանը:

Գերդաստանի արական սեռը բոլորուեցին քուրսու չորս կողմը: Կանացի սեռից միայն աղայի ամուսին տան տիկինը մասնակցեց տղամարդկանց սեղանին:

— Սկէք, այ խիզան, զարձաւ տանտիկինը քնջնում կուչ եկած հարսներին ու աղջիկներին, եկէք, զուք էլ էղտեղ սեղան նստեցէք. էսպիսի հանգիստաւոր իրիկունը մեղք է ձեզ ոտի վրայ թողնել՝ թէ ինչ է՝ առաջ տղամարդիկը հաց ուտեն՝ լետոյ զուք: Իս իրիկուն Քրիստոսի Ծնունդն է, հիմի տէրտէրը կրգայ, տունը կօրհնի, տիրացուերն ել կրգան, «Խորհուրդ մեծ» կերգեն. հարկ է, որ սուփրէն մինչև կէս զիշեր փռուած մնայ:

— Ի՞նչ անեմ, այ կնիկ, սիրտս մի քիչ կախ է, զարբերներ չըկային ժամումը, որ համեցէք անէի. ես մի քիչ ուշ գնացի, եղած օտարականներին ինձանից յառաջ ուրիշներն էին հշաւիրել, ասաց Սամփոտն աղան:

— Դէ, փնռք իմ Աստծուն, մեր սուփրէն

էլ առանց օտարականի չըթողեց, երկու հիւր միասին հասցրեց. զորթ է՝ երկուսն էլ ուրախ չեն եկած, բայց Աստու կամքի դէմ զնալ չենք կարող, ուրախութիւնն ու տխրութիւնը, հարստութիւնն ու աղքատութիւնն եղբայր են. ինչ որ մեր ճակատին զրուած է՝ էն պիտի լինի, Աւոյլի երեսին խորհրդաւոր նայելով՝ պատասխանեց մարդին տանտիկինը:

— Էղուց Ջրօրհնէք է հա՛, խոր թառաչ արձակելով՝ հարցրեց Աւոյն:

— Հա՛, Ջրօրհնէք է:

— Ափսո՛ս, ես յոյս ունէի, առայ Աւոյն, որ մինչև Ջրօրհնէք՝ իմ հայանալու հրամանը կըզար ու ես ուրախ ուրախ էզուցուան օրն Աբարանու ժամու՛րը իսաչի հետ կըկնքուէի. չըզիտեմ՝ ընչի՛ էսքան ուշացաւ. ոչինչ համրաւ չունի՛ք, աղա՛յ, մեր մէյիքենց տանից, կարելի է՝ թուղթս եկել է ու ձիւնը ճանապարհները կապել է, չեն կարողացել ինձ կանչել:

— Համբաւ ունինք, հացդ կեր, պրծիր՝ նոր կասենք:

Նստակատիկին յատուկ՝ իւղեղէն ու ձկնեղէն կերակուրները միմեանց յաջորդեցին:

Աւոյն կերաւ, կշտացաւ, մի քանի բաժակ էլ զինի խմեց, բերանը սրբեց, «Աստուած ձեր օջաղը շէն ու հաստատ պահի» ասելով՝ չետ նստեց:

Ընդունուած սովորութեան համաձայն՝ ա-

մօթ է տղամարդին կօնանց վրայ նայելը, բայց Աւոյի աչքն ակամայից երբեմնապէս, ինքնաբերաբար թռչում էր դէպի մօթ անկիւնը:

Մի կին, թէ աղջիկ, կարծես, զիտմամբ, թաղնուել էր մեծ հարսի ետեր և կուչ եկել, Աւոյի աչքն անզիտակցաբար այդ խորհրդաւոր անձնաւորութեան վրայ էր սեւաւում: Աւօն նկատեց, որ այդ կինն օտարական պիտի լինէր և տանտիկնոջ ակնարկած երկու հիւրերից մէկը. հարսներն իրանց կողմից յաճախակի հիւրասիրում էին նրան, իսկ նա շատ քիչ էր ձեռք ու բերան շարժում:

— Տէր հայր, ասաց Սամփոնն աղան, երբ քահանան եկաւ, տունն օրհնեց, էս նամակը քեզ վրայ է:

Քահանան առաւ ծրարը, բացեց, կարդաց և նայեց Աւոյի երեսին:

— Մն է, հարցրեց աւրաւրը Սամփոնն աղային:

— Մտ, սա է.

— Տղայ, դն ես ուզում հայանալ, հարցրեց քահանան:

— Ես եմ, գարմաւյաճ նայեց Աւօն քահանային և Սամփոնն աղային, բայց կ'զինչ թուղթ է:

— Գու չրդիտե՛ս:

— Ոչ, տէր հայր, պատասխանեց իւր կողմից Սամփոնն աղան, մեր Աւօն կտտեղ չէր,

իրիկունս եկաւ չօլիցը, դու հասկացրու սրան  
զրի զօրութիւնը:

— Էս էն թուղթն է, ասաց տէրտէրը, որ  
քո տուած խնդրքի զօրութիւնով՝ քեզ հայա-  
նապու հրաման է եկել: Ձեր Աբարանու տէր-  
տէրը հրամանը զրկել է ինձ և խնդրում է, որ ես  
էզուց, խաչից յետոյ՝ քեզ մկրտեմ. կուզե՞ս, թէ ոչ:

— Ո՛չ, կտրական պատասխան տուեց Աւգօն:

— Հապա էլ բնջնու էիր իշխանութիւնին  
զլիսացաւանք տալիս:

— Ես Աբարանու ժամում, իմ տէր—մէլիք  
Մնօյի, իւր կնոջ ու աղջկայ աչքի առաջին  
կուզեմ հայանալ:

Աւգօյի խօսքի վրայ՝ անկիւնն յմթութեան  
մէջ կանգնած խորհրդաւոր կի՛նն սկսեց դառ-  
նապէս հեկեկալ:

— Ե՛ս, մեղանջ Աստծու, ո՛ւմ եմ տեսնում,  
ճանաչեց, ճչաց Աւգօն և կամեցաւ մօտ վազել  
դէպի յացողը, բայց մտածեց, որ անվայել է,  
չըվսաահացաւ:

— Հ՛ս, Աւգօ, ճանաչեցիր, քո տիրոջ աղջիկն  
է, Սալբին է, ասաց տանտիկիներ:

— Սալբին ինքն իւր ձեռքովն է բերել էս  
հրամանը Աւգօ, խօսեց Սամփսոն աղան:

— Հապա մէլիքը, հապա խանումս:

— Նրանք կեանք ու արևը քեզ ու իրանց  
աղջկանն են բաշխել, հառուչեց տանտիկիներ,



մէլիք Մնօյի օջաղը ծխողը մնացել է մեր Սալբին:

— Մէկ էլ Մկրտիչը, բաժանուեց հարսների խմբից, մօտ եկաւ տէրտէրի աջն առաւու կամաց փչփչաց Սալբին:

— Աւղօն կանգնած տեղը դողում էր անխօս, նրա աչքերից արտասուքը թափուում էր. նրա բերանը չօսք չէր դալիս:

— Ա՛լ է Մկրտիչը, աղջիկս, հարցրեց քաղցրութեամբ տէրտէրը:

— Սալբին գլխով նշան տուեց տանտիկնոջը պատասխանելու:

— Ես այնք, տէր հայր, մեր Սալբին ամաչում է, մէջ մտաւ տիկիներ, լուսահոգի մէլիք Մնօյի ու իւր կնոջ վերջին կամքն էն է եղել, որ դու մեր Աւղօյին էգուց մկրտես, անունը դնես Մկրտիչ և Աւթօրէքի գլխին՝ էս երկուսին թագ ու պրակով միացնես. մենք էլ էգուց՝ նորամանուկի կնքաւորը պիտի լինինք, ութօրից յետոյ էլ՝ խաչեղբայրը:

— Աստուած հանգիստ արքայութիւն տայ հանդուցեալներին, մեռնողի կամքը սուրբ է, բայց խեղճերն ընչից են վախճանուել, հարցրեց տէրտէրը:

— Քիւղը վարդահարինք է ընկել, սրանց տունն էլ մտել է, մարդ ու կնիկ մի շաքթուան մէջ դնացել են, իրիկունը կինն է մեռել, առաւօտը մարդն է հողին աւանդել: Լսի բաժին մէլիքը տեսել է, որ իւր աղջիկը որբ է մնում,

իրանց տէրտէրին է յանձնում, որ զիւզում ունեցած շարժական և անշարժ կայանքին ինքը — քահանան զլուխ քաշի, իսկ Սալբուն զրկի ինձ մօտ: Սրանից յետոյ՝ Սալբու մէրն ու հէրը մենք ենք, իսկ տէրը՝ մեր Մկրտիչը: Միտքդ պահի, տէրտէր, որ էգուց սրա անունը Մկրտիչ կնքես, ասաց տանտիկինը:

Քահանան նախ՝ մի «Հոգոցով» արքայութիւն մաղթեց հանգուցեալին՝ ին և ապա՝ մի «Պահպանիչով» կեանք ու արև խնդրեց ապագայ զոյգերին:

Աւթօրէքի զլիսին՝ մէլիք Մնօյլ հողին ըզգաց արքայութեան մէջ, որ իւր աղջկիր տէր ունի ու տէրն է Եզիզի Խալիլ աղայից «սոտով զլիսով» պարզ և ստացած մի ժամանակուայ Եզիզու լամուկ, «Երկօտանի մտրուկ» Աւբօն, իսկ այսօրուայ Մկրտիչը:

Մկրտիչն ու իւր կին Սալբին տարեկցին միայն մի շաբաթով գնացին Աբարան՝ իրանց ծնողներին տաօլանաքարեր քաշելու և գերեզմաններն օրհնել տալու: Նրանք մնացին Ազիզում: Նրանք զիւզի լաւ հայերից մինն են. բայց նրանց տունը մինչև օրս էլ՝ Սալբու կամքին հակառակ կոչում է.

«Եզիզի Մկրտչենց»

Ու՛մ բերանը կապուած է:





